

ՀԻՆԿՏԱՐԱԿԱՐՆՅԱՆ «ԵՐԳ ԵՐԳՈՑԸ» ՈՐՊԵՍ 10-16-ՐԴ ԴԱՐԵՐԻ
ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ
Հովսեփյան Լ. Վ.

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը և հատկապես նրա անդրանիկ երկը՝ «Երգ երգոցի մեկնությունը», ստեղծագործական լայն դաշտ բացեցին թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ գրականության (մասնավորապես քնարերգության) համար: Հինկտակարանյան «Երգ երգոցի» ազդեցությունները նկատելի են Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Առաքել Սյունեցու, Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությունների վրա: «Երգ երգոցի» պատկերային համակարգը զգալիորեն ազդում է ինչպես միջնադարյան սիրային քնարերգության, այնպես էլ փաստական ատաղձ ունեցող պատմական ողբերի և հիշատակարանների ժանրերի վրա:

Բանալի բառեր. մեկնություն, ձեռագիր, քնարերգություն, այլաբանություն, հիշատակարան, գրականություն, Աստվածաշունչ, գրիչ, ստանալ, «Երգ երգոց»:

Հայ միջնադարյան քնարերգությունը դարեր ի վեր թե՛ շարքային ընթերցողին և թե՛ ուսումնասիրողներին հիացրել է: Եվ նրա կազմավորման, ձևաբովանդակային փոփոխությունների, ժանրային փոխանցումների, ստեղծագործական ակունքների խնդիրները տակավին չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը, քանի որ թույլ են տալիս հստակեցնել քնարերգության հիմնական աղբյուրի՝ Աստվածաշունչ մատյանի ազդեցության ոլորտները, սահմաններն ու ուղիները: Միջնադարյան մատենագրական հուշարձանների՝ Մուրբ Գրքի հետ ունեցած ցանկացած աղերս իր հերթին կարևոր է Աստվածաշնչի քննական բնագրի կնճռոտ հարցերը լուծելու, ինչպես նաև հոգևոր և աշխարհիկ գրականության կապի խնդիրները պարզաբանելու առումով:

Հինկտակարանյան «Երգ երգոցը» և նրա այլաբանական մեկնությունը ստեղծագործական ակունք դարձնելով՝ Գրիգոր Նարեկացին իր ստեղծած հոգևոր երգի նոր՝ «Գանձարան» (կամ «Տաղարան») ժողովածուի գանձ, տաղ, մեղեդի և հորդորակ (փոխ) միավորներով վերափոխեց հայ հոգևոր երգը: Բանաստեղծական նուրբ ընկալման և ստեղծագործական հնարավորինս կատարյալ յուրացման արդյունքում «Երգ երգոցը» դարձավ նոր տեսակի բանաստեղծության աղբյուր: Հենց Գրիգոր Նարեկացու միջնորդությամբ «Երգ երգոցի» ազդեցության հմայքով պետք է բացատրել միջնադարի հայ հոգևոր և աշխարհիկ քնարերգության պատկերային համակարգի վերա-իմաստավորումն ու սիրային քնարերգության նվաճումները [12-30]:

Սողոմոն Իմաստունի այս երկը հայ իրականության մեջ արդեն ուներ ուղիղ ընկալման կողմնակիցներ: Թերևս այդ նպատակով Վասպուրականի Գուրգեն արքան քանիցս հորդորում է Գրիգոր Նարեկացուն հեղինակել «Երգ երգոցի» մեկնությունը: Մյուս կողմից, ավանդաբար համարվելով հարսանեկան երգ, այս շքեղ հյուսվածքն արտացոլում է կնոջ և տղամարդու սերը՝ կնոջ արտաքին գեղեցկության մանրամասն նկարագրություններով: Այն պանծացնում է սիրո գաղափարը, և քանի որ Նարեկացու ընկալմամբ երկիրը չունի ավելի պատվական բան, քան կնոջ և տղամարդու սիրո պանծացումը, ուստի այս գործի մեջ պետք է փնտրել Աստծո և հավատացյալի հոգևոր կապի այլաբանությունը: Նարեկացու բանաստեղծության այս մեկնակետը թե՛ հոգևոր-այլաբանական և թե՛ ուղիղ-սիրային իմաստով հսկայական ազդեցություն ունեցավ միջնադարյան քնարերգության վրա [8-63], [9-78]:

Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատության և Տաղերի միջոցով հետագա շրջանի հայ քնարերգությունը ժառանգում է «Երգ երգոցի» ողջ բառագանձը («Տաղ քաղցրիկ»), պատկերային համակարգը («Տաղ Ծննդեան») և նրանում առկա սիրային տրամադրությունը («Տաղ Յարութեան»): Իսկ ավելի ուշ, երբ պոեզիայի մեջ այլաբանությունն իր դիրքերը զիջում է, սիրային մոտիվն արագորեն դառնում է աշխարհիկ քնարերգության ամենահին լարը՝ չկորցնելով կապն իր երկու հիմնական աղբյուրների՝ հինկտակարանյան «Երգ երգոցի» և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հետ:

Նարեկացիական ավանդների փոխանցումը հստակ երևում է Անանուն բանաստեղծի (10-րդ դ.) «Տաղ Յովհաննու Կարապետին» քերթվածում, որտեղ Հերովդեսի դուստրը նկարագրվում է այսպես.

Հերքըն ծալ ի ծալ առեալ նըմանեալ արքայօձին.

Աջօրըն ծաւալ ծըփէր ծիրանի ծովու նըման:

Ուլունքն ի վերայ լանջացն նըմանեալ լերանց ծաղկանց:

Եւ վարդ վառելով այտիցն, նըմանեալ խայծեալ նըռանց [10-205]:

Այս օրինակում Անանուն բանաստեղծն ազդված է ոչ այնքան «Երգ երգոցից», որքան Գրիգոր Նարեկացու բանաստեղծական հնարանքներից, որոնք, գրեթե նույնությամբ կիրառելով, վկայում են՝ ***Նարեկացու բանաստեղծական գյուտերի մասին տակավին 10-րդ դ.-ում և աստիճանաբար տարածում են գտնում:***

Հայ մշակույթի ծաղկման կիլիկյան շրջանում (1080–1375) հոգևորի կողքին աստիճանաբար իր իրավունքն է ստանում մարմնականը. վերագնահատվում են հին աշխարհի գիտությունը, փիլիսոփայությունն ու արվեստը: Ուշադրության կենտոնում են հայտնվում մարդու ներաշխարհին առնչվող սուրբգրային հատվածների՝ Դավթի «Սաղմոսների», Սողոմոն Իմաստունի «Առակների», «Ժողովողի», «Երգ երգոցի» և որոշ մարգարեությունների մեկնաբանությունները: Կիլիկիայի երկու նշանավոր գործիչներ՝ Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին, վերագնահատելով Գրիգոր Նարեկացու գրական վաստակը, նպաստեցին հեղինակի ստեղծագործության ճանաչմանն ու տարածմանը:

Գրիգոր Նարեկացու պոեզիայից ազդված՝ ստեղծագործական ազատ ներշնչանքով Ներսես Շնորհալին նոր բարձրության հասցրեց հոգևոր երգը [17-146-147]՝ Մարիամ Աստվածածնի և Հռիփսիմե կույսին նվիրված գողտրիկ տաղերում լայնորեն կիրառելով «Երգ երգոց»-ի պատկերային համակարգը: «Տաղ ի սուրբն Հռիփսիմե» խորագիրը կրող քերթվածում Հռիփսիմեն, որպես «Երգ երգոցի» հարսը, անխախտ և սուրբ սիրով կապված է Փեսա Քրիստոսի հետ: Բանաստեղծական ամեն տուն ավարտվում է «ո՛վ, սուրբ Հռիփսիմե» կրկնակով, որտեղ Հռիփսիմեն ներբողվում է որպես թագուհի, գարնանային ծաղիկ, անուշահոտ վարդ, փեսայի դուստր, արեգակնային արդարության հարս:

Միրով բաղձման խանդակաթ ըղձամբ Հոգւոյն,

Անձուկ վառեալ տարփմամբ սրտի ի սէր փեսային.

Հարսն Որդւոյ թագաւորին գեղեցկութեամբ պճնեալ,

ով սուրբ Հռիփսիմե [5-254]:

Ամենանուրբ գույներով է ներկայացված նաև Մարիամ Աստվածածինը «Տաղ աւետեաց» քերթվածում.

Դրախտ աստուծոյ ծաղկալի,

Նարդոս բուրեալ ի հոգի,

Հովիտ պայծառ շուշանի,

Աղբիւր գետոց քառակի [18-166]:

Ներսէս Շնորհալու ներբողական այս քերթվածները, ինչպէս նաև Գրիգոր Նարեկացու «Ծննդան» տաղը, քնարերգություն են ներմուծում կնոջ արտաքին նկարագրությունը՝ հոգևոր գրականության այլաբանական ընկալումների սահմաններում. կինը համեմատվում է տարաբնույթ երփներանգ և հոտավետ ծաղիկների, բնության անգուգական երևույթների հետ: Այսպիսի պատկերներով լի են Հովհաննէս Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու քերթվածները: Մարիամ Աստվածածնի՝ որպէս մոր, և Հռիփսիմեի՝ իբրև պատմական անձի, բանաստեղծական պատկերները կամուրջ են, որով **«Երգ երգոցի» բառապաշարով և պատկերավորման միջոցներով հոգևոր երգը կապվում է աշխարհիկ սիրային քնարերգության հետ:**

«Երգ երգոցի» գլխավոր խորհրդանիշներ հարսը և փեսան աստիճանաբար դառնում են քնարերգության, ինչպէս նաև պատկերագրության հիմնական կերպարներ: Ձեռագիր աղբյուրների մանրանկար-լուսանցագարդերում «Երգ երգոցն» արտացոլված է Աստվածածին-հարսի տեսքով (ձեռ. հմր. 206, 1318 թ.) [14-914], հարսի և փեսայի ճոխ պատկերներով (ձեռ. հմր. 2706, 1668-1669 թթ.) [15-31-32]:

Հարսի այլաբանական պատկերն սկսվում է կիրառվել նաև աշխարհիկ գրականության մեջ՝ **պատմական ողբի ժանրում:** Այս գրական տեսակը հիմնավորվեց Ներսէս Շնորհալու «Ողբ Եղեսիոյի» միջոցով: Երբեմնի փարթամ Եղեսիան ներկայանում է որպէս հարս, որի հարսնարանն ու առագաստը կողոպտվել են, և նա զրկվել է փեսայից: Այս նույն համեմատությունը տեսնում ենք նաև Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղէմի» քերթվածում.

Ի յիմ երկու ստեանցս ըմպէին՝

Կաթն ու գինի, գոր բղխէին...

Եւ զիս պճնեալ զարդարէին

Որպէս զհարսն փեսային [6-281]:

Չափածո խոսքն իր զգացմունքայնությամբ ներթափանցում է նաև ձեռագիր մատյանների հիշատակարանների մեջ: Բանաստեղծական ձիրք ունեցող գրիչները հյուսում են գեղարվեստական գողտրիկ պատկերներ ներկայացնող չափածո հիշատակարաններ, որոնցից մի քանիսը ունեն գրական արժեք: Սողոմոնի «Երգ երգոց» և «Առակաց» գրքերի համար չափածո հանգավորված հիշատակարաններ ունի Ներսէս Շնորհալին.

Յիշատակարան երգողի բանիս («Երգ երգոց»)

Սովալ (իմա՝ «Երգ երգոցով») այնքան գեղեցկանայ,

Քանի՞ արդեւք վայելչանայ

Ճըշմարտութեան բանս որ ի սմա:

Երգոյն հանգոյն Սողոմոնի,

Մա, որ Երգոց երգ անուանի,

Որ գփեսային երկնաւորի

Ըզսէրն առթէ հարսին կուսի [19-175]:

Նույնիսկ Սողոմոնի «Առակների» հիշատակարանի վրա նկատելի է «Երգ երգոցի» ազդեցությունը.

Փեսայն իջմամբ ցողատարափ՝

համբուրէ գտիպըն լուսոյ Արփ,

Քուր կոչելով աստուածակառք

յաննիթական տարեալ քաղաք [19-388]:

«Երգ երգոցի» և հիշատակարանի ժանրի միահյուսման գողտրիկ օրինակ է ՄՄ. հմր. 1418 Ժողովածուի հետագա ստացող Մովսեսի (1280 թ.) հիշատակարանի ամփոփումը: Գրիչ-բանաստեղծն իրեն համարում է փեսա, իսկ ձեռագիրը՝ հարս, որի հետ ինքը կապված է սիրով: Այս օրինակով «Երգ երգոցի» հիմնական խորհրդանիշ հարսն առարկայանում է [11-500]: Հավանաբար գրիչն անգիր իմացել է «Երգ երգոցից» հատվածներ և կիրառել ըստ պահանջի, ուստի կարող ենք փաստել, որ ***բանավոր ավանդույթը նույնպես նպաստում է «Երգ երգոցի» տարածմանն ու ստեղծագործարար յուրացմանը:***

12-րդ դ. Խաչատուր անունով հոգևորական գրիչը «Երգ երգոցի» մասին «կենդանի ձայնով շատ և շատ պատճառներ» լսելով ի մի է բերում դրանք (ՄՄ. հմր. 1897): Պարզվում է, որ հոգևորականներն անգամ իրենց իսկ բերանով վկայել են, թե «Երգ երգոց»-ն ընկալվել է ուղիղ. «Իսկ այլք ոմանք ի վարդապետացն մերոց ասացին, եթե... սա (Պողոս) գլխաւոր գոլով անապատաւորաց, ուներ ընդ ձեռամբ կրաւնաւորս բազումս, որք ոչ ընդունէին զայս գրիս, այլ խոտէին, քանզի ***մարմնական տոփումն հարսին եւ փեսային առ միմեանս վարկանէին: Իսկ նա բազում անգամ խրատէր զնոսա, եւ ոչ կարէր հաւանեցուցանել***» [16-119բ-120ա]:

13-14-րդ դդ. սիրային քնարերգության մեջ հարսի և փեսայի այլաբանական պատկերներին փոխարինելու են գալիս վարդը և բլբուլը: Վերջիններիս վրա նկատելի է թե՛ արևելյան պոեզիայի, թե՛ «Երգ երգոցի» ազդեցությունը [1-135, 152]:

14-րդ դարավերջին, երբ Կիլիկիայի գրական փայլն աստիճանաբար մարում է, մշակույթի նորոգման դերն ստանձնում է Տաթևի վանքը Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ (ծաղկման շրջանները՝ 1365-1415 թթ.): Նա գրել է «Երգ երգոցի» համար բառարանային արժեք ունեցող մի լուծմունք-մեկնություն, որից էլ հավանաբար ազդվել է Տաթևացու քրոջ որդին և աշակերտ Առաքել Սյունեցին: «Երգ երգոցը» միջնադարի մեր ոչ մի բանաստեղծի գրչի տակ չի հղկվել և փայլել այնպես, ինչպես Առաքել Սյունեցու: «Երգ երգոցի» հինգ հատվածների այլաբանական մեկնությունների հեղինակն անդրադարձել է թե՛ քարոզներով [2-73-74], թե՛ բանաստեղծական ներշնչանքով՝ հյուսելով այնպիսի տողեր, որոնք ընկալվել են որպես սիրային քնարերգության իսկական նմուշներ, որոնք շատ բարձր են գնահատվել և թարգմանվել են ռուսերեն [2-2, 40-67]: Առաքել Սյունեցու բանաստեղծական ժառանգության մեջ առանձնահատուկ են «Երգ երգոցի» ազդեցությամբ ստեղծվածները («Տարփմամբ սիրոյ քեզ տագնապիմ», «Ահա բաղձամ քեզ ցանկալի», «Ահա մեծ լեառն և ահագին»), որոնց մեջ սիրային բազմաթիվ հատվածներ են թաքնված: «Ադամբգրքի» իր հիշատակարանում Առաքել Սյունեցին խոսում է Գրիգոր Տաթևացու մասին խոր ջերմությամբ, որն արտահայտելու համար դիմում է «Երգ երգոցի» պատկերային համակարգին.

Իդձ բաղձանաց սիրովրդ քո,

Տուր ինձ համբոյրբս բերանոյ.

Զի ծարաւի սիրտըս հոգոյ,

Ըմպել զըստինս քո գինոյ [3-225]:

Եթե մի պահ մոռանանք, որ խոսքը լաբունապետ Գրիգոր Տաթևացու մասին է, ապա վերոբերյալը կարող է ընկալվել որպես սիրային երգ:

Իրենց նրբությամբ և գեղեցկությամբ՝ որպես «Երգ երգոցի» բանաստեղծական յուրացման փայլուն նմուշներ, աչքի են ընկնում հատկապես Աստվածածնին նվիրված տաղերը: Անձնական սիրո ապրում է «Տարփմամբ սիրոյ քեզ տագնապիմ» անխորագիր տաղը, որի ազդեցությունը նկատելի է հետագա շրջանի սիրային քնարերգության մեջ:

«Առ ճշմարիտ բաղձալին Քրիստոս» խորագրով այլաբանական մի տաղ Առաքել Սյունեցին նվիրել է Քրիստոսին: Առաքել Սյունեցին այստեղ անում է նորամուծություն. նա «Երգ երգոցի» բնաբանը

ներմուծում է քերթվածի մեջ՝ որպես բանաստեղծական տան առաջին տող:

Առ ճշմարիտ բաղձալին Քրիստոս

Դու ի վերայ ծաղկեալ լերանց,

Անուշահոտ խնկաբերաց,

Ճառագայթես լուսով փառաց,

Ձինատեսիլ, սպիտակացած [4-1-2]:

«Երգ երգոցը» բանաստեղծական ինքնաստեղծ հատվածներով միահյուսելու այս ձևը լայնորեն կիրառել է նաև 15-16-րդ դ. I կեսի քնարերգու Գրիգորիս Աղթամարցին: Այլաբանորեն թե առանց այլաբանության երգվող սերը հեղինակի պեզիայում առկայծում է հյութեղ պատկերներով և թարմ շնչով:

Տաղ Սուրբ Աստուածածնի

Թէպէտ կամ ի նինջ ւ ի քուն,

Բայց ունիմ ըզսիրտս արթուն,

Վառեալ կամ ի քո սիրուն,

Տաճար լույսոյ մայր սուրբ կույս [7-169]:

Գրիգորիս Աղթամարցին այս բանաստեղծությունը հյուսել է Առաքել Սյունեցու «Առ ճշմարիտ բաղձալին Քրիստոս» տաղի ակնհայտ ազդեցությամբ: «Երգ երգոց»-ի անմիջական ազդեցությամբ են ստեղծված նաև «Տաղ սուրբ Աստուածածնին ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ ասացեալ» («Արքայն փակեալ պարտեզ...») և «Աղթամարցի Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ» («Ահա այգիք մեր ծաղկեցան...» սկսվածքով) քերթվածները: Գրիգորիս Աղթամարցին ներբողային գեղեցիկ տաղեր է նվիրել Աստվածամորը, որոնք առավելապես կրում են Առաքել Սյունեցու ազդեցությունը:

Գրիգորիս Աղթամարցու ամենասիրված և ամենաընդօրինակված գործերից է «Ահա այգիք մեր ծաղկեցան...» սկսվածքով տաղը, որը գրչագրերի մեծ մասի խորագրում ունի «յԵրգ երգոց» հավելումը [2-73-74]: «Երգ երգոց»-ի ազդեցությունն ամենաուժեղն է այս տաղում: Հոգևոր այլաբանական իմաստով այն այլևս չի ընկալվում. բնության հետ միաձուլյ մարդկային վեհագույն՝ սիրո զգուցումի ներբողն է այս բանաստեղծությունը: Հավանաբար այդ պատճառով է, որ Վիեննայի մատենադարանի 1604-1626 թթ. հմր. 797 գրչագիրն ունի «Ի Գրիգոր կաթողիկոսէ Աղթամարցոյ ասացեալ ի դեմըս առ սուրբ Աստուածածնին» խորագիրը, ինչը ցույց է տալիս, որ գրիչներն ամեն կերպ ցանկացել են ընդգծել տաղի այլաբանական իմաստը:

Գրիգորիս Աղթամարցու տաղերում նկատելի է «Երգ երգոց»-ի ազդեցության երկու շերտ. առաջինն անմիջական փոխազդեցությունն է, երբ տաղի հյուսվածքի մեջ է ներմուծվում «Երգ երգոց»-ի բնաբանը, իսկ մյուսն ավելի թույլ ազդեցություն է. այստեղ արտացոլվում է միայն «Երգ երգոցի» պատկերային համակարգը՝ միջնորդավորված ձևով: Բխելով «Երգ երգոց»-ից՝ այդ պատկերներն այլևս չեն ընկալվում որպես այդպիսին, չեն դառնում ամբողջ բանաստեղծության հիմք. «Կարմիր-սպիտակ խնձոր անտառին, / Ծըրար ըստաշխից և իւղ մեծագին»: Կամ՝ «Յարեայ շրջեցայ ի մեջ գիշերոյս, / Խընդրեցի գտա իմ աչացըս լոյս» և այլն [13-12]:

Հավանական է, որ «Երգ երգոց»-ից Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությունն թափանցած այս պատկերներն ու արտահայտություններն արդեն բանաստեղծի մտապատկերում առկա պատրաստի խորդանիշներ են, որոնց գործածությունն աստիճանապար սովորական էր դառնում միջնադարի հայ քնարերգության համար և դժվար տարբերակելի: Այդ խորհրդանիշ-պատկերներն սկսում են գործածվել ոչ այնքան հոգևոր թեմաները մարմնական երևույթներով այլաբանելու նպատակով, որքան որպես ինքնուրույն պատկերավորման միջոցներ:

«Երգ երգոց»-ը չի դադարում ներշնչանքի աղբյուր լինել նաև ուշ շրջանի հոգևոր և աշխարհիկ գրականության համար. ազդեցություններ նկատում ենք 16-րդ դ. երկրորդ կեսից - 18-րդ դդ. գրականության մեջ [20-81, 147, 166-170, 190, 196, 607], սակայն այդ շրջանի մի հսկայական նյութ տակավին ձեռագիր վիճակում է և ոչ ամբողջապես ուսումնասիրված: Այդ պատճառով «Երգ երգոց»-ի ազդեցությունների քննությունը վերոնշյալ դարաշրջանի համար թողնում ենք այլ առիթի:

Հինկտակարանյան «Երգ երգոց»-ի ազդեցության քննությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

ա. «Երգ երգոցի» բանաստեղծական յուրացման անդրանիկ դրսևորումները միջնադարի հայ քնարերգության մեջ Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատությունն ու Տաղերն են: Սրանք Աստվածաշունչ մատյանի հետ հեղաշրջեցին միջնադարի հայ քնարերգությունը՝ շրջանառության մեջ դնելով «Երգ երգոց»-ի ողջ պատկերային համակարգը, որը լայնորեն կիրառեցին հետագա շրջանի քնարերգուներ Ներսես Շնորհալին, Առաքել Սյունեցին, Գրիգորիս Աղթամարցին և այլք:

բ. «Երգ երգոցի» պատկերային համակարգն ի սկզբանե կիրառվում է զգուշորեն. բանաստեղծներն ավելի կառչած էին բնագրից՝ ստեղծելով բանաստեղծական կայուն ձևեր «Երգ երգոց»-ի բնաբանային և ինքնաստեղծ հատվածների միահյուսումով: Բանաստեղծական այս ձևը շրջանառության մեջ դրեց Առաքել Սյունեցին, որը շարունակական կիրառություն ստացավ Գրիգորիս Աղթամարցու տաղերում:

գ. «Երգ երգոց»-ի խորհրդանիշներն աստիճանաբար «թափանցում են» ինչպես պատկերագրության, այնպես էլ պատմական ատաղձ ունեցող հուշարձանների՝ ձեռագիր հիշատակարանների և պատմական ողբերի մեջ՝ պատկերավորման լայն հնարավորություններ ստեղծելով:

ВЕТХОЗАВЕТНАЯ «ПЕСНЬ ПЕСНЕЙ» КАК ИСТОЧНИК АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ЛИТЕРАТУРЫ X-XVI ВЕКОВ

Овсебян Л. В.

Творчество Григора Нарекаци, и особенно его первое произведение «Комментарий к Песне песней», открыло широкое творческое поприще для религиозной и светской литературы (в частности, для лирики). Влияния ветхозаветной «Песни песней» заметно в произведениях Нерсеса Шнорали, Нерсеса Ламбронаци, Аракела Сюнеци и Григориса Ахтамарци. Система образов «Песни песней» значительно влияет как на средневековую лирическую поэзию, так и на жанры исторических плачей и колофонов, имеющих историческую основу.

Ключевые слова: комментарий, рукопись, лирика, аллегория, колофон, литература, Библия, писец, получатель, «Песня Песней».

THE OLD TESTAMENT SONG OF SONGS AS A SOURCE OF ARMENIAN MEDIEVAL LITERATURE OF THE 10TH-16TH CENTURIES

Hovsepyan L. V.

Grigor Narekatsi's work, and especially his first creation, "Commentary on the Song of Songs", opened a wide creative field for literature, both religious and secular (in particular, for lyrics). The influence of the Old Testament "Song of Songs" and its commentaries is noticeable in the works of Nerses Schnorhali, Nerses Lambronatsi, Arakel Syunetsi and Grigoris Aghtamartsis. This connection is especially important while analyzing medieval lyric poetry, because through the "Song of Songs" the influence of the Bible

manifests itself initially in its spiritual, and then direct, love interpretation, The system of images of the “Song of Songs” has a considerable effect both on the medieval lyric poetry, as well as the genres of historical lamentations and colophons, which have a historical basis.

Keywords: commentary, manuscript, lyrics, allegory, colophon, literature, Bible, scribe, recipient, Song of Songs.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Երկեր, Հատոր Բ.: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն: 1967: 387 էջ:
2. Անասյան Հ. Ս. Հայկական մատենագիտություն: Ե-ԺԸ դդ.: Հատոր Բ.: Առաքել Սյունեցի – Բեատրիկե Հռոմայեցի: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն: 1976: 1546 էջ:
3. Առաքել Սյունեցի Ադամգիրք: Աշխատասիրությամբ Ա. Մադոյանի: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն: 1989: 415 էջ:
4. Առաքել Սիւնեցի եւ իւր քերթուածները: Ուսումնասիրութեամբ հրատարակեց Հ. Մկրտիչ Պոտուրեան: Վենետիկ: Ի տպարանի Սրբոյն Ղազարու: 1914: 353 էջ:
5. Գանձարան հայ հին բանաստեղծության: Պատրաստեց Պ. Խաչատրյան: Երևան: 2000: «Հայագիտակ» հրատարակչություն: 992 էջ:
6. Գրիգոր Տղա Բանաստեղծություններ և պոեմներ: Աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն: 1972: 452 էջ:
7. Գրիգորիս Աղթամարցի XVI դ. Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրությունները Մայիս Ավդալբեգյանի: ՀՄՍՈ ԳԱ հրատարակչություն: 1963: 358 էջ:
8. Դոլուխանյան Ա. Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ: Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն: 1984: 230 էջ:
9. Խաչատրյան Պ. Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը: Ս. Էջմիածին: 1996: 395 էջ:
10. Հայ դասական քնարերգություն: Հատոր I: Հին շրջան. Միջին դարեր (V-XII): Կազմեցին և ծանոթագրեցին Լ. Մկրտչյան, Ա. Մադոյան: Երևան: «Սովետական գրող» հրատարակչություն: 1986: 271 էջ:

11. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԳ. դար: Կազմեց՝ Ա. Մաթևոսյան: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1984: 987 էջ:
12. Հովսեփյան Լ. Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության հարաբերակցությունը տաղերի հետ// Հայագիտական հանդես: N 2(4), Երևան: 2006: էջ 25-36:
13. Հովսեփյան Լ. Գրիգորիս Աղթամարցին և «Երգ երգոց»-ը// Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու: II Պրակ, 2012 թ., դեկտեմբերի 14: Երևան: «Մանկավարժ» հրատարակչություն: 2014: էջ 9-13:
14. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի: Հատոր Ա.: Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան: Խմբագրութեամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն: 1984: 1467 էջ:
15. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի: Հատոր Թ.: Ձեռագիրք 2701-3000: Խմբագրութեամբ՝ Գեորգ Տեր-Վարդանեանի: Երևան: «Նայիրի» հրատարակչութիւն: 2017: 2379 էջ:
16. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 1897: ԺԲ. դ., գրիչ՝ Հայրապետ վրդ.: Յաղագս Երգոց երգոյն տեսութիւն փաստաբանութեան: 287 թերթ:
17. Ներսես Ծնորհալի (Հողվածների ժողովածու): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1977: 226 էջ:
18. Ներսես Ծնորհալի Տաղեր և գանձեր: Աշխատասիրությամբ Արմինե Քյոշկերյանի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1987: 400 էջ:
19. Տեառն Ներսէսի Ծնորհալոյ Հայոց կաթուղիկոսի Բանք չափաւ: Վենետիկ: 1928: Ս. Ղազար: 675 էջ:
20. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.) երկու հատորով: Հատոր առաջին: Աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1987: 831 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովսեփյան Լ. Վ. – Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
 Հայկական պետական մանկավարժական համալսարան
 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան՝ հին ձեռագրերի ինստիտուտ
 Էլ. փոստ՝ lilit_hovsepian@mail.ru

Տրվել է խմբագրություն 03.10.2019